# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԵՄ-ԲՄԱՊՁԲ-21/34 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **21.05.2021թ.**

10.05.2021-21.05.2021թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ նոր շարժասանդուղքների (տեղադրումով) ձեռքբերման ԵՄ-ԲՄԱՊՁԲ-21/34 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ս. Մնացականյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի պետ, |
| Գ. Մխիթարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի գլխավոր ինժեներ, |
| Ռ. Մնացականյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի Շարժասանդուղքների սպասարկման ուղեմասի պետ, |
| Վ. Հարությունյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի էլեկտրամեխանիկական ուղեմասի պետ: |

Հանձնաժողովի նախագահ Ս. Եղիազարյանը (շահագործման գծով տնօրենի տեղակալ) բացակայում էր: Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ս. Մնացականյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով 4 անդամ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ.-ի մայիսի 10-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | «Գործարանային» կայարանի նոր շարժասանդուղքների ձեռքբերում (տեղադրումով) | 217830000 |
| 2 | «Ս. Դավիթ» կայարանի նոր շարժասանդուղքների ձեռքբերում (տեղադրումով) | 116424000 |
| 3 | «Զ.Անդրանիկ» կայարանի նոր շարժասանդուղքների ձեռքբերում (տեղադրումով) | 500310000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00871643, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Երզնկյան 16/2, Հեռ.՝ +374 55 110 611, էլ. հասցե՝ verelakgroup@gmail.com |
| 2 | «Գայանե Նիկողոսյան | ՀՎՀՀ՝ 23291823, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Չարենցի 4/90, Հեռ.՝ +374 94 642 033, էլ. |

| | | |
|---|---|---|
| | Նիկողոսի» Ա/Ձ | հասցե՝ liongroup-lion@yandex.ru |
| 3 | «Ալեռտո» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02686862, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նաիրի Զարյան 74Բ, Հեռ.՝ +374 98 282 938, էլ. հասցե՝ info@alerto.am |
| 4 | «Էնջինիրինգ» ՓԲԸ | ՀՎՀՀ՝ 02286169, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բագրատունյաց 54, Հեռ.՝ +374 55 529 211, էլ. հասցե՝ h.hovakimyan@kenergo.am |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալի.

1. «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ – Ներկայացված լիազորագիրը վավեր չէ, քանի որ վերջինիս գործողության ժամկետն ավարտվել է 30.12.202թ.-ին: Հավելված 1.1-ով 1-3-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերում առաջարկվող երաշխիքային սպասարկման ժամկետները հստակ սահմանված չեն:
2. «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ - Հավելված 1.1-ով 1-3-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերում ներկայացված չեն Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները և մակնիշները: Հավելված 1.1-ով 1-3-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերում առաջարկվող երաշխիքային սպասարկման ժամկետները հստակ սահմանված չեն:
3. «Ալեռտո» ՍՊԸ - Հավելված 1.1-ով 1-2-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերում առաջարկվող երաշխիքային սպասարկման ժամկետները հստակ սահմանված չեն:
4. «Էնջինիրինգ» ՓԲԸ – Հավելված 1.1-ով 1-3-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերում առաջարկվող երաշխիքային սպասարկման ժամկետները հստակ սահմանված չեն:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | «Գործարանային» կայարանի նոր շարժասանդուղքների ձեռքբերում (տեղադրումով) | «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ | 217,830,000.00 | 200,000,000.00 | 40,000,000.00 | 240,000,000.00 |
| | | «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ | | 250,000,000.00 | 50,000,000.00 | 300,000,000.00 |
| | | «Ալեռտո» ՍՊԸ | | 205,000,000.00 | 41,000,000.00 | 246,000,000.00 |
| | | «Էնջինիրինգ» ՓԲԸ | | 214,000,000.00 | 42,800,000.00 | 256,800,000.00 |
| 2 | «Ս. Դավիթ» կայարանի նոր շարժասանդուղքների ձեռքբերում (տեղադրումով) | «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ | 116,424,000.00 | 100,000,000.00 | 20,000,000.00 | 120,000,000.00 |
| | | «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ | | 83,000,000.00 | 16,600,000.00 | 99,600,000.00 |
| | | «Ալեռտո» ՍՊԸ | | 135,000,000.00 | 27,000,000.00 | 162,000,000.00 |
| | | «Էնջինիրինգ» ՓԲԸ | | 116,000,000.00 | 23,200,000.00 | 139,200,000.00 |
| 3 | «Զ.Անդրանիկ» կայարանի նոր շարժասանդուղքների ձեռքբերում (տեղադրումով) | «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ | 500,310,000.00 | 500,000,000.00 | 100,000,000.00 | 600,000,000.00 |
| | | «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ | | 250,000,000.00 | 50,000,000.00 | 300,000,000.00 |
| | | «Էնջինիրինգ» ՓԲԸ | | 520,000,000.00 | 104,000,000.00 | 624,000,000.00 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ-ին, «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ-ին, «Ալեռտո» ՍՊԸ-ին, և «Էնջինիրինգ» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Սահմանված ժամկետներում «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ-ի, «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ-ի, «Ալեռտո» ՍՊԸ-ի, և «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-3 | «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ | բավարար |
| 1-3 | «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ | բավարար |
| 1-2 | «Ալեռտո» ՍՊԸ | բավարար |
| 1-3 | «Էնջինիրինգ» ՓԲԸ | բավարար |

4. Հանձնաժողովի նիստը կասեցնել՝ բավարար գնահատված մասնակցի հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 20.05.2021թ. ժամը 15:00-ն, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 13-րդ հարկում:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. 20.05.2021թ. ժամը 15:00-ին հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին բավարար գնահատված և բանակցություններին հրավիրված մասնակիցներից ներկա էին բոլորը, բացառությամբ «Ալեռտո» ՍՊԸ-ի:

2. «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ-ի կողմից՝ նախքան բանակցությունների մեկնարկը, Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ներկայացվել է բանակցություններին իր փոխարեն ներկայացուցչի ներկայանալու լիազորագիրը, իսկ ներկայացուցիչը բանակցություններին ներկայացել էր անձը հաստատող փաստաթղթով, սակայն առանց լիազորագրի բնօրինակի:

3. Հանձնաժողովը որոշեց «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ-ի ներկայացուցչին թույլատրել մասնակցել բանակցություններին այն պայմանով, որ մինչև տվյալ օրվա 18:00-ն գնահատող հանձնաժողովին կներկայացվի լիազորագրի բնօրինակը, հակառակ դեպքում «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ-ի կողմից բանակցություններին ներկայացված նոր նվազեցված գնային առաջարկները կհամարվեն առոչինչ:

4. Հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակեց մյուս մասնակիցների համար, և բանակցությունների համար սահմանեց ժամկետ՝ առավելագույնը 15 րոպե տևողությամբ:

5. Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկներն են.

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Մասնակցի կողմից ներկայացված նոր նվազեցված գնային առաջարկ | |
|---|---|---|---|---|
| N | Անվանում | | Գինը առանց ԱԱՀ | Գինը ներառյալ ԱԱՀ |
| 1 | «Գործարանային» կայարանի նոր շարժասանդուղքների ձեռքբերում (տեղադրումով) | «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ | 114,166,666.67 | 137,000,000.00 |
| | | «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ | 116,666,666.67 | 140,000,000.00 |
| | | «Էնջինիրինգ» ՓԲԸ | 145,000,000.00 | 174,000,000.00 |
| 2 | «Ս. Դավիթ» կայարանի նոր շարժասանդուղքների ձեռքբերում (տեղադրումով) | «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ | 70,833,333.33 | 85,000,000.00 |
| | | «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ | 69,166,666.67 | 83,000,000.00 |
| 3 | «Զ.Անդրանիկ» կայարանի նոր շարժասանդուղքների ձեռքբերում (տեղադրումով) | «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ | 416,666,666.67 | 500,000,000.00 |
| | | «Էնջինիրինգ» ՓԲԸ | 415,833,333.33 | 499,000,000.00 |

6. «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվեց լիազորագրի բնօրինակը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 1 | «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ | X | 114,166,666.67 |
| | 2 | «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ | | 116,666,666.67 |
| | 4 | «Ալեռտո» ՍՊԸ | | 205,000,000.00 |
| | 3 | «Էնջինիրինգ» ՓԲԸ | | 145,000,000.00 |
| 2 | 2 | «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ | | 70,833,333.33 |
| | 1 | «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ | X | 69,166,666.67 |
| | 4 | «Ալեռտո» ՍՊԸ | | 135,000,000.00 |
| | 3 | «Էնջինիրինգ» ՓԲԸ | | 116,000,000.00 |
| 3 | 3 | «ՎԵՐԵԼԱԿՇԻՆ» ՍՊԸ | | 416,666,666.67 |
| | 1 | «Գայանե Նիկողոսյան Նիկողոսի» Ա/Ձ | X | 250,000,000.00 |
| | 2 | «Էնջինիրինգ» ՓԲԸ | | 415,833,333.33 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն

արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ 19.04.2021թ. ստացվել են հարցումներ, 20.04.2021թ. ներկայացվել են պարզաբանումներ, հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված

մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ս. Մնացականյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Գ. Մխիթարյան ____________

Ռ. Մնացականյան ____________

Վ. Հարությունյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Մ. Ղազարյան ____________